



ՈՒՂԵՐՁ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

- **բացառում է** ապրանքային շուկայում կամ տնտեսական գործունեության որևէ այլ ոլորտում արհեստական մենաշնորհների կամ գերիշխող դիրքերի ձևավորումն ու գոյությունը.
- **հաստատում է**, որ շուկաների աղավաղման ցանկացած փորձ, այդ թվում՝ ապրանքների ներմուծման կամ հետագա շրջանառության սահմանափակման ուղղված ցանկացած գործողություն (ինչպես պետական մարմինների, այնպես էլ տնտեսավարող առանձին սուբյեկտների կողմից) հայտնվելու է կառավարության ուշադրության կենտրոնում՝ դրանց կանխարգելմանն ու բացառմանն ուղղված անհապաղ գործողություններ ձեռնարկելու նպատակով.
- **հայտնում է**, որ այդ նպատակով ՀՀ կառավարությունում գործում է **ԹԵԺ ԳԻԾ**, և կոչ է անում տնտեսավարող սուբյեկտներին ու քաղաքացիներին՝ շուկաների աղավաղման ցանկացած փորձի (այդ թվում՝ ապրանքների ներմուծման կամ հետագա շրջանառության սահմանափակման ուղղված ցանկացած գործողության) վերաբերյալ տվյալներ ունենալու դեպքում այդ մասին անմիջապես հայտնել նշված ԹԵԺ գծով:

ԹԵԺ ԳԻԾ - 010 56 23 52

ԴԵՂԵՐ ԵՎ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի Հանրապետություն երրորդ երկրներից ներմուծման ժամանակ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ	Ապրանքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ /նախատեսված 2016թ համար/	ԱԱՀ	Ակցիզային հարկ
3002 20 000	– պատվաստանյութեր մարդկանց համար՝		0%	
3002 20 000 1	– – կարմրախտի դեմ	0%		
3002 20 000 2	– – հեպատիտ B-ի դեմ	0%		
3002 20 000 9	– – այլ	0%		
3003	Դեղամիջոցներ (բացի 3002, 3005 կամ 3006 ապրանքային դիրքերում նշվածներից)՝ կազմված երկու կամ ավելի բաղադրատարրերի խառնուրդից, թերապեւտիկ կամ կանխարգելիչ նպատակներով օգտագործելու համար, սակայն մանրածախ վաճառքի համար դեղաչափված դեղաձեւերով կամ տարաներում կամ փաթեթվածքներում չբաժնեծրարված՝		20%	-
3003 10 000 0	– պենիցիլիններ կամ դրանց՝ պենիցիլանային թթվի կառուցվածք ունեցող ածանցյալները պարունակող կամ ստրեպտոմիցիններ կամ դրանց ածանցյալները	0%		

	պարունակող			
3003 20 000 0	– այլ հակաբիոտիկներ պարունակող	0%		
3003 31 000 0	– 2937 ապրանքային դիրքում նշված հորմոնները կամ այլ միացությունները պարունակող, բայց հակաբիոտիկներ չպարունակող՝ – – ինսուլին պարունակող	0%		
3003 39 000 0	– – այլ	0%		
3003 40 000 0	– ալկալոիդներ կամ դրանց ածանցյալները պարունակող, բայց 2937 ապրանքային դիրքում նշված հորմոնները կամ այլ միացությունները կամ հակաբիոտիկներ չպարունակող	0%	20%	
3003 90 000 0	– այլ	0%		
3004	Դեղամիջոցներ	0%		
3004 10 000	– պենիցիլիններ կամ դրանց՝ պենիցիլանային թթվի կառուցվածք ունեցող ածանցյալները պարունակող կամ ստրեպտոմիցիններ կամ դրանց ածանցյալները պարունակող՝ – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ պենիցիլիններ կամ դրանց՝ պենիցիլանային թթվի կառուցվածք ունեցող ածանցյալները՝			
3004 10 000 1	– – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ ամպիցիլինի	0%		

	տրիհիդրատ կամ ամպիցիլինի նատրիումական աղ կամ բենզիլպենիցիլինի աղեր եւ միացություններ կամ կարբենիցիլին կամ օքսացիլին կամ սուլացիլին (սուլտամիցիլին) կամ ֆենոքսիմեթիլպենիցիլին			
3004 10 000 4	– – – այլ՝ – – – – բաժնեծրարված կամ ներկայացված դեղաչափված դեղաձեւերով, բայց մանրածախ վաճառքի համար չփաթեթավորված	0%	20%	
3004 10 000 5	– – – – այլ	0%		
3004 10 000 6	– – այլ՝ – – – բաժնեծրարված կամ ներկայացված դեղաչափված դեղաձեւերով, բայց մանրածախ վաճառքի համար չփաթեթավորված՝ – – – – որպես հիմնական ազդող նյութ միայն ստրեպտոմիցինի սուլֆատ պարունակող	0%		
3004 10 000 7	– – – – այլ	0%		
3004 10 000 8	– – – այլ	0%		
3004 20 000 1	– – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ ամիկացին կամ գենտամիցին, կամ գրիզեոֆոլվին, կամ դօքսիցիկլին, կամ դօքսոռուբիցին, կամ	0%		

	կանամիցին, կամ ֆուզիդաթթու եւ դրա նատրիումական աղը, կամ լեւոմիցետին (քլորամֆենիկոլ) եւ դրա աղերը, կամ լինկոմիցին, կամ մետացիկլին, կամ նիստատին, կամ ռիֆամպիցին, կամ ցեֆազոլին, կամ ցեֆալեքսին, կամ ցեֆալոտին, կամ էրիթրոմիցինի հիմք		20%	
3004 20 000 2	– – – այլ	0%		
3004 20 000 3	– – այլ – – – որպես հիմնական ազդող նյութ միայն էրիթրոմիցինի հիմք կամ կանամիցինի սուլֆատ պարունակող	0%		
3004 20 000 9	– – – այլ	0%		
3004 31 000 0	– 2937 ապրանքային դիրքում նշված հորմոնները կամ այլ միացությունները պարունակող, բայց հակաբիոտիկներ չպարունակող՝ – – ինսուլին պարունակող	0%		
3004 32 000 1	– – – բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում մանրածախ վաճառքի համար եւ որպես հիմնական ազդող նյութ միայն ֆլուոցինոլոն պարունակող	0%		
3004 32 000 9	– – – այլ	0%		
3004 39 000 1	– – – բաժնեծրարված տարաներում կամ	0%		

	փաթեթվածքներում մանրածախ վաճառքի համար		20%	
3004 39 000 9	– – – այլ	0%		
3004 40 000 2	--պարունակող էֆեդրին կամ դրա աղեր	5%		
3004 40 000 3	--պարունակող պսեվդոէֆեդրին կամ դրա աղեր	5%		
3004 40 000 4	--պարունակող նորէֆեդրին կամ դրա աղեր	5%		
3004 40 000 5	--- բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում մանրածախ վաճառքի համար եւ որպես հիմնական ազդող նյութ պարունակող միայն՝ նատրիումի կոֆեին– բենզոատ կամ քսանտինոլի նիկոտինատ, կամ պապավերին, կամ պիլոկարպին, կամ թեոբրոմին, կամ թեոֆիլին	7.5%		
3004 40 000 8	---այլ	5%		
3004 50 000 1	– – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ ասկորբինաթթու (վիտամին C) կամ նիկոտինաթթու, կոկարբոքսիլազա, կամ նիկոտինամիդ, կամ պիրիդոքսին, կամ թիամին եւ դրա աղերը (վիտամին B1), կամ ցիանոկոբալամին (վիտամին B12)	0%		
3004 50 000 2	– – – այլ	0%		

3004 50 000 5	– – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն ալֆա–տոկոֆերոլի ացետատ (վիտամին E)	0%	20%	
3004 50 000 6	– – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ կոկարբօքսիլազա կամ ասկորբինաթթու (վիտամին C) կամ ցիանոկոբալամին (վիտամին B12)	0%		
3004 50 000 8	– – – այլ	0%		
3004 90 000 1	– – – յոդ կամ յոդի միացություններ պարունակող	0%		
3004 90 000 2	– – – այլ	0%		
3004 90 000 5	– – այլ – – – յոդ կամ յոդի միացություններ պարունակող	0%		
3004 90 000 6	– – – – որոնք որպես հիմնական ազդող նյութ պարունակում են միայն՝ ացետիլսալիցիլաթթու կամ պարացետամոլ, կամ ռիբօքսին (ինոզին), կամ պոլիվինիլպիրոլիդոն	0%	20%	
3004 90 000 9	– – – – այլ	0%		

Ծանուցում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքին և «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին համապատասխան:

Ցամաքային ճանապարհով դեղերի և դեղանյութերի ներմուծում «Բաց թողում՝ ներքին սպառման համար» գործընթացի մանրամասն նկարագրություն

Փուլ I. ՀՀ տարածք մուտքի մաքսային մարմնից մինչև ժամանակավոր պահպանման վայր



Քայլ 1. Փաստաթղթերը ներկայացրեք մաքսային մարմիններին

ՀՀ տարածք ապրանքների ժամանման պահին փոխադրողը¹ մաքսային մարմիններին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցով միջազգային փոխադրում իրականացնելիս ներկայացվում են

1. հետևյալ փաստաթղթերը՝

- միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վերաբերյալ փաստաթղթեր (օրինակ՝ տեխնիկական հաշվառման փաստաթուղթ),
- տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր² (օրինակ՝ **CMR**),
- փոխադրվող ապրանքների վերաբերյալ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթեր (օրինակ՝ **Invoice**, պայմանագիր, հաշիվ ապրանքագիր և այլն)։

2. հետևյալ տեղեկությունները՝

- միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի պետական գրանցման մասին,
- ապրանքներ փոխադրողի անվանումը և հասցեն,
- ապրանքներն ուղարկող երկրի և նշանակման երկրի անվանումը,
- ապրանքներն ուղարկողի ու ստացողի անվանումն ու հասցեն,
- ապրանքները վաճառողի և ստացողի մասին՝ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթերին համապատասխան,
- բեռնատեղիների քանակի, դրանց նշագրումների և ապրանքների փաթեթվածքների տեսակների մասին,
- ապրանքների անվանումը, ինչպես նաև դրանց ծածկագրերը՝ նվազագույնը առաջին չորս նիշերով՝ Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգին կամ Արտաքին առևտրային գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան,
- ապրանքների համաքաշը (արտահայտված կիլոգրամներով) կամ ապրանքների ծավալը (արտահայտված խորանարդ մետրերով), բացառությամբ խոշոր բեռների,
- այնպիսի ապրանքների առկայության մասին, որոնց ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք արգելված կամ սահմանափակված է,
- միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի կազմման վայրի ու ամսաթվի մասին։

¹ ապրանքները փաստացի տեղափոխող կամ տրանսպորտային միջոցի օգտագործման համար պատասխանատու անձը

² բեռնագիր կամ ապրանքների փոխադրման այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կատարվում են միջազգային փոխադրումներ

❗ Փաստաթղթերը և տեղեկությունները ներմուծման վայրում փոխադրողի անունից կարող է ներկայացնել փոխադրողի լիազորած անձը:

❗ Փոխադրողի անունից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև մաքսային ներկայացուցիչների կամ փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից (օրինակ վարորդ):

(հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 158, 159 հոդվածներ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք 149 հոդված)



Քայլ 2. Կազմակերպեք բեռնատարի կշռումն ու ռենտգեն զննումը

Ավտոմոբիլային տրանսպորտը սահմանային մաքսային կետ մուտք գործելուց կշռվում և զննվում է տեխնիկական զննման (ռենտգենային) սարքավորման (ռապիսկան) միջոցով:

Կշռումից հետո բեռն ուղեկցող փաստաթղթերին կցվում է նաև կշռման կտրոնը:

Քայլ 3. Վճարեք ճանապարհային և բնապահպանական վճարները, եթե բեռնափոխադրող ավտոմեքենան գրանցված չէ ՀՀ-ում

Վճար ու և

Բեռնափոխադրող ավտոմեքենաների համար նախատեսված են հետևյալ ճանապարհային վճարի տեսակները՝

ա) ՀՀ-ում չգրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը (տվյալ վճարը չի տարածվում Ռուսաստանի Դաշնությունում և Վրաստանում գրանցված փոխադրողների նկատմամբ)։

բ) ՀՀ-ում չգրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը։

գ) մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը։

❗ **բ) և գ)** կետերով նշված ավտոմեքենաների համար նախատեսված են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տրվող թույլտվություններ, որոնք պետք է ստացվեն նախապես՝ համաձայն ՀՀ կառավարության 20.07.2006 թվականի N 1106-Ն կարգի: **(Հիմք՝ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենք, «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև տրանսպորտային ոլորտում համագործակցության սկզբունքների և փոխհարաբերությունների պայմանների մասին» Համաձայնագիր)**

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան



մաքսային մարմին:

(Հիմք՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք)

Ինչպես վճարել. Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով փոխադրողը բնապահպանական և ճանապարհային վճարներ կատարելու նպատակով այցելում է անցման կետի մոտակայքում տեղակայված բանկի մասնաճյուղ իրականացնում վճարումները՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմին:

Քայլ 4. Ուղևորվեք դեպի նշանակման վայր



Ներկայացված փաստաթղթերի հիման վրա մաքսային մարմինների կողմից կազմվում է ներքին տարանցման փաստաթուղթ, իրականացվում են մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ գործողությունները և ամբողջ փաթեթը վերադարձվում է փոխադրողին:

(Ներքին տարանցման փաստաթղթի ձևը և լրացման կարգը սահմանված է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 01.03.2006թ. N06/20-Ն հրամանով)

Փոխադրողը ուղևորվում է ներքին տարանցման փաստաթղթում նշված նշանակման վայր:

Նշանակման վայրի ընտրությունը կատարում է տնտեսավարողը նախօրոք նշում կատարելով փոխադրման փաստաթղթերում կամ նախօրոք համապատասխան խնդրանքով դիմելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին:

! ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար մաքսային մարմինը, անկախ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված ապրանքների նշանակման վայրերից, կարող է սահմանել նշանակման այլ վայրեր հետևյալ դեպքերում.

1) եթե մաքսային հայտարարագրումը իրականացնում է մասնագիտացված մաքսային մարմինը.

2) եթե նշանակման վայրի մաքսային մարմնի գործունեության գոտում առկա է արտակարգ իրավիճակ, կամ որոշակի ապրանքատեսակների ներմուծման համար օրենքով գործում են արգելքներ:

(Հիմք՝ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենք, հոդված 184)

Քայլ 5. Ապրանքը հանձնեք ժամանակավոր պահպանության



Նշանակման վայր մուտք գործելուց տրանսպորտային միջոցը նորից կշռվում է, որից հետո մաքսային մարմինը իրականացնում է բեռնատարի արտաքին զննում համոզվելու, որ բեռը հասանելի չի եղել և կապարակնիքները վնասված չեն:

Ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու համար փոխադրողը, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք կամ նրանց ներկայացուցիչները մաքսային մարմին են ներկայացնում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, առևտրային և (կամ) մաքսային փաստաթղթեր, որոնք պարունակում են ապրանքների, ապրանքներն ուղարկողի (ստացողի), ուղարկող (նշանակման) երկրի մասին տեղեկություններ:

Մաքսային մարմինը ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը գրանցում է այդ փաստաթղթերը մաքսային մարմին հանձնելուց հետո առավելագույնը **1 (մեկ) ժամվա ընթացքում** և վերը նշված անձին տրամադրում է փաստաթղթերի գրանցումը հաստատող փաստաթուղթ:



(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 169-րդ հոդված)

Փուլ II. Մաքսային պահեստ մուտքից մինչև հայտարարագրի ներկայացումը

Քայլ 6. Կատարեք բեռի նախնական զննում և գնացեք նշանակված մաքսատուն

Հայտարարատուն կարող է իրականացնել բեռի նախնական զննում ապագայում ճիշտ հայտարարագրելու նկատառումից ելնելով:

Հայտարարատուն փաստաթղթերով գնում է նշանակված մաքսատուն՝ մաքսային ձևակերպում իրականացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման մասով ընդհանուր տեղեկավարություն



Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծումը կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված **ներմուծման հավաստագրի** հիման վրա:

Ներմուծման հավաստագիրը տրվում է էլեկտրոնային եղանակով, իսկ դիմողի պահանջով՝ նաև թղթային տարբերակով՝ **երեք օրինակից**:

Ներմուծման կամ արտահանման հավաստագրի մեկ օրինակը մաքսային անհրաժեշտ մյուս փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մաքսային մարմիններ, երկրորդ օրինակը մնում է հայտատուի մոտ, իսկ երրորդը՝ ՀՀ առողջապահության նախարարությունում: Ներմուծման հավաստագիրը տրվում է **մինչև մեկ տարի ժամկետով**:



Քայլ 7. Ստացեք ներմուծման հավաստագիր

Դիմողը Հայաստանի Հանրապետություն դեղեր և (կամ) դեղանյութեր ներմուծելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացնում (ՀՀ Արտաքին առևտրի ազգային Մեկ Պատուհան համակարգով) **ներմուծման թույլտվություն ստանալու մասին էլեկտրոնային հայտ**, որին կից ներկայացնում է ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված ցանկին համապատասխան պահանջվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները.

- 1) հայտ.
- 2) համապատասխան գործունեության իրականացնելու լիցենզիայի պատճենը
- 3) դեղերի և (կամ) դեղանյութերի ձեռք բերման պայմանագիրը՝ ստորագրված և կնքված կողմերի կողմից.
- 4) հաշիվ-ապրանքագիրը՝ կնքված մատակարարի կողմից.
- 5) ապրանքափոխադրման բեռնագիրը
- 6) դեղի և (կամ) դեղանյութի յուրաքանչյուր սերիայի որակի հավաստագիրը՝ տրված արտադրող կազմակերպության կողմից, ներմուծվող խմբաքանակի սերիայի, արտադրության և պիտանիության ժամկետների պարտադիր նշումով: Միջնորդ կազմակերպություններից դեղերը և (կամ) դեղանյութերը ձեռք բերելու դեպքում, արտադրող կազմակերպության կողմից տրված որակի հավաստագիրը պետք է կնքված լինի միջնորդ կազմակերպության կնիքով:



Դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիրը տրամադրվում է ԵԱՏՄ-ի մաքսային սահմանով դեղը և (կամ) դեղանյութը փաստացի մեկ անգամ ներմուծելու համար:

ՄՏ ՈՒԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիր տալու համար ստուգվում են դեղերի և դեղանյութերի որակի ցուցանիշները և կիրառվում փաստաթղթային կամ լաբորատոր փորձաքննության այնպիսի մեթոդներ, որոնք թույլ են տալիս՝

ա) կատարել դեղերի և դեղանյութերի նույնականացում՝ ստուգելով Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման առկայությունը.

բ) հավաստել դեղերի և դեղանյութերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում ընդունված դեղագրքերի և (կամ) տեխնիկական պայմանների պահանջներին:

 Դիմորդն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ներկայացրած տեղեկությունների հավաստիության համար:

 Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիրը տրվում է մինչև համապատասխան մաքսային հայտարարագիրը ներկայացնելը՝ համաձայն ԵԱՏՄ-ի և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության:

 Պահպանման հատուկ պայմաններ պահանջող դեղեր ու դեղանյութեր ներմուծողը և (կամ) արտահանողն իրականացնում են դրանց մասնագիտական պահպանումը՝ համաձայն ՀՀ մաքսային օրենսդրության:

Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիր տրալու համար ներկայացվող պահանջները՝

Հայաստանի Հանրապետություն դեղեր կամ դեղանյութեր ներմուծելու իրավունք ունեն՝

ա) դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները.

բ) Հայաստանի Հանրապետությունում դեղերի և (կամ) դեղանյութերի արտադրության լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները՝ իրենց սեփական արտադրության համար.

գ) լիցենզիա չունեցող տնտեսավարող սուբյեկտները, որոնց աշխատանքներն առնչվում են դեղերի և դեղանյութերի հետազոտման, փորձարկումների անցկացման, որակի, արդյունավետության ու անվտանգության հսկմանը:

Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող դեղերը, որոնց փաթեթավորման փոփոխությունները չեն ազդում արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի վրա, և երբ առկա է արտադրողի կողմից տրված որակի հավաստագրի բնօրինակը, կամ արտադրողի կողմից այլ երկրների ներմուծողին տրված հավաստագրի պատճենը՝ վավերացված արտահանող կազմակերպության կնիքով:

 Ներմուծվող դեղի ներդիր թերթիկի համապատասխան գրանցված դեղի ներդիր թերթիկի հետ բովանդակային տարբերության դեպքում ներկրող կազմակերպությունն այդ դեղի իրացման ժամանակ ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ներդիր թերթիկով, իսկ լեզվական տարբերության դեպքում՝ ապահովում է հայերենով ներդիր թերթիկով: Ներդիր թերթիկի փոփոխությունը չի թույլատրվում, եթե տեխնիկապես առանց դեղի տուփը վնասելու հնարավոր չէ այն բացել:

**Համապատասխանում է
ը կարևոր է**

Ներմուծվող դեղերի և դեղանյութերի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում ընդունված դեղագրքերի և (կամ) տեխնիկական պայմանների պահանջներին:

Դեղանյութերի ներմուծման համար պահանջվում են դեղանյութերի արտադրության պայմանները հավաստող փաստաթղթեր (պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) հավաստագիր և (կամ) արտադրության լիցենզիա և (կամ) որակի հավաստագիր՝ տրված արտադրողի կողմից):

Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահին դեղերի և (կամ) դեղանյութերի պիտանիության մնացած ժամկետը պետք է լինի **նվազագույնը մեկ տարի**: Առանձին դեպքերում ՀՀ առողջապահության նախարարության թույլտվությամբ կարող են ներմուծվել ավելի կարճ պիտանիության ժամկետ ունեցող դեղեր, որոնց սպառման հնարավորությունը (մինչև դրանց պիտանիության ժամկետի ավարտը) պետք է հիմնավորված լինի: Այն դեպքում, երբ դեղերի և (կամ) դեղանյութերի պիտանիության ընդհանուր ժամկետը մեկ տարի է և դրանից պակաս, ապա ներմուծման պահին պետք է մնացած լինի **պիտանիության ժամկետի 2/3-ը**:

**Պիտանի
է
մինչև**

**Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման
հավաստագրի կամ համապատասխանության հավաստագրի տրամադրումը**



Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիրը փաստաթղթային և (կամ) լաբորատոր փորձաքննությունների հիման վրա տալիս է ՀՀ առողջապահության նախարարությունը:

Այն ապրանքները, որոնք ներմուծվում են ոչ դեղագործական նպատակներով, ներմուծման ժամանակ ենթակա չեն հավաստագրման: Այս դեպքում ներմուծողը մաքսային հայտարարագրի դարձերեսին կատարում է **«Ներմուծվում են ոչ դեղագործական նպատակներով»** գրառումը:

Ներմուծման հավաստագիր ստանալու մասին հայտն ու անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու պահից մինչև ներմուծման հավաստագրի տրամադրումը կամ դրա տրամադրման մերժումը կարող է տևել ոչ ավելի, քան **7 աշխատանքային օր**՝ ներառյալ լաբորատոր փորձաքննությունը: Դեղի և (կամ) դեղանյութի որակի հետ կապված խնդիրների և կեղծման կասկածի դեպքում լրացուցիչ լաբորատոր փորձաքննության և արտադրողի հետ պարզաբանումներ կատարելու նպատակով այն կարող է երկարաձգվել մինչև **20 աշխատանքային օր**: Ներմուծման հավաստագիր ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և այլ նման բացթողումներ) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը

թերի լինելու դեպքում ՀՀ առողջապահության նախարարությունը դրանք հայտնաբերելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է դիմորդին երկու աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:



Դիմորդը վճարում է փորձաքննությունների և դրանց հետ կապված այլ աշխատանքների կատարման ծախսերը՝ անկախ արդյունքից:

Դիմորդի գրավոր խնդրանքով նրան կամ նրա ներկայացուցիչներին կարող է տրվել փորձաքննությունների կատարման պայմաններին և ընթացքին ծանոթանալու հնարավորություն:

Փաստաթղթերի ուսումնասիրության դրական արդյունքի դեպքում ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչը ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով, դիմորդի և մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ներկայությամբ, մաքսատանը կատարում է դեղերի և (կամ) դեղանյութերի նախնական զննում և նմուշառում՝ կազմելով նմուշառման ակտ՝ **3 օրինակից**, որոնք ստորագրվում են նմուշառման 3 մասնակցի կողմից:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից կատարվում է դեղերի նմուշների նույնականացում պետական գրանցում ունեցող դեղերի նմուշների հետ, ստուգվում են ապրանքաուղեկից փաստաթղթերը, դրանց և նմուշների համապատասխանությունը:

Փաստաթղթային ուսումնասիրության և նույնականացման արդյունքների հիման վրա ընդունվում է որոշում որակի հսկման լաբորատորիայում ընտրված նմուշների լաբորատոր փորձաքննություն կատարելու մասին (անհրաժեշտության դեպքում կատարվում է նաև լրիվ դեղագրքային փորձաքննություն):

Փաստաթղթային փորձաքննությունների, դեղերի նմուշների նույնականացման և լաբորատոր փորձաքննության դրական արդյունքի դեպքում տվյալ ապրանքախմբի համար տրվում է ներմուծման հավաստագիր:

Փորձաքննությունների բացասական արդյունքի դեպքում տվյալ դեղի կամ դեղանյութի Հայաստանի Հանրապետություն ներմուծումը մերժվում է: Ապրանքախմբի մնացած դեղերի և (կամ) դեղանյութերի համար, որոնք ունեցել են փորձաքննության դրական արդյունք, տրվում է ներմուծման հավաստագիր:

Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման մերժումը



Հայաստանի Հանրապետությունում դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծումը մերժվում է, եթե՝

ա) ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը թերի են կամ ակնհայտ կեղծ են, կամ խեղաթյուրված:

բ) ներմուծվող դեղերը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չունեն:

գ) դեղերի և (կամ) դեղանյութերի որակական ցուցանիշները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում ընդունված չափանիշներին.

դ) դեղերը և (կամ) դեղանյութերը ժամկետանց են.

ե) դեղերի և (կամ) դեղանյութերի պիտանիության ժամկետները չեն համապատասխանում սահմանված պահանջներին.

զ) դեղերը, դեղանյութերը և ապրանքաուղեկից փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում միմյանց.

է) դեղերի փաթեթավորման փոփոխություններն ազդում են արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի վրա, ինչպես նաև բացակայում են արտադրողի կողմից տրված որակի հավաստագրի բնօրինակը, կամ արտադրողի կողմից այլ երկրների ներմուծողին տրված հավաստագրի պատճենը՝ վավերացված արտահանող կազմակերպության կնիքով:

Ներմուծման մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Փուլ III. Հայտարարագրումից մինչև բաց թողնում

Քայլ. 8. Ներկայացրեք հայտարարագիրը



Հայտարարատուի կողմից մաքսատանը ներկայացվում են .

- Մաքսային հայտարարագիր
- Արտաքին տնտեսական գործարքի իրականացումը հաստատող փաստաթուղթ, իսկ արտաքին տնտեսական գործարքի բացակայության դեպքում՝ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման,

օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը

- Տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը (օրինակ CMR)
- Գրանցված համապատասխանության հայտարարագիր
- Պայմանագիր մաքսային ներկայացուցչի հետ (եթե հայտարարագրումն իրականացվում է ներկայացուցչի միջոցով)
- Հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարումները հավաստող փաստաթղթերը, որոնք պետք է նախապես հավաստված լինեն մաքսատան ֆինանսական վարչության (գանձապահի) կողմից:

(Հիմք՝ ՀՀ կառավարության 21 նոյեմբերի 2003 թվականի N 1779-Ն որոշում)

Բացի վերը նշված փաստաթղթերից՝ անհրաժեշտության դեպքում ներկայացվում են նաև մաքսային միության մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված փաստաթղթեր:



Որպես Հայտարարատու, ի թիվս այլոց, կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետության անձը,

- որը կնքել է արտաքին տնտեսական գործարք կամ որի անունից (հանձնարարությամբ) կնքվել է այդ գործարքը.

■ ունի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք՝ արտաքին տնտեսական գործարքի բացակայության պարագայում.

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք, հոդված 186)

Վճարված է

Մաքսային վճարների (ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի (ինչպես նաև դրանց փոխարինող հաստատագրված վճարների) և բնապահպանական վճարի) գումարների վճարումը

հավաստվում է՝

1) հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին ներկայացվող թղթային վճարման հանձնարարականի օրինակի ներկայացմամբ, որը պարունակում է բանկի կողմից վճարումը կատարված լինելու մասին նշում, **կամ**

2) մաքսային մարմինների կողմից շահագործվող հայտարարագրման ավտոմատացված համակարգին առևտրային բանկերի կողմից ուղարկված՝ մաքսային վճարները կատարված լինելու մասին նշումով էլեկտրոնային հաղորդագրությամբ: Անձի կողմից մաքսային վճարումները կարող են կատարվել հեռահար սպասարկման համակարգերի կամ բանկային համակարգում կիրառվող այլ վճարային գործիքներով:

(Հիմք՝ ՀՀ կառավարության 19.04.1999թ. թիվ 230 որոշում)



Ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները: Մաքսային մարմինն իրավունք ունի ստուգելու փաստաթղթերի ներկայացված պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակներին: Եթե ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ նախկինում մաքսային մարմին ներկայացվել են մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթեր, բավարար է ներկայացնել այդպիսի փաստաթղթերի պատճենները կամ նշել տեղեկություններ մաքսային մարմին այդ փաստաթղթերը ներկայացնելու մասին:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք, հոդված 183)

Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կողմից՝ ապրանքների մաքսային հայտարարագրման շրջանակներում:



Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրումն իրականացվում է ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդի, ապրանքների մաքսային արժեքի մեծության, մաքսային արժեքի որոշման հետ առնչություն ունեցող՝ արտաքին տնտեսական գործարքի հանգամանքների և պայմանների վերաբերյալ տեղեկությունների հայտարարագրման, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստաթղթերի ներկայացման միջոցով:

Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգը հաստատված է **Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ**, որտեղ ներառված է նաև.

1. հայտարարագրված մաքսային արժեքը հաստատող փաստաթղթերի ցանկը
2. ինչպես նաև լրացուցիչ ստուգման անցկացման ժամանակ լրացուցիչ փաստաթղթերի և

տեղեկությունների ցանկը, որոնք կարող են պահանջվել մաքսային մարմնի կողմից:

! Ապրանքների մաքսային արժեքի հսկողության իրականացման արդյունքներով մաքսային մարմինն ընդունում է որոշում ապրանքների հայտարարագրված մաքսային արժեքի ընդունման վերաբերյալ կամ որոշում՝ ապրանքների հայտագրված մաքսային արժեքի ճշգրտման վերաբերյալ:

Ապրանքների հայտագրված մաքսային արժեքի ճշգրտման մասին մաքսային մարմնի կողմից կայացված որոշման մեջ պետք է նշվի հիմնավորումը և դրա կատարման ժամկետը:

Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների բաց թողնումը որոշում կայացվելու դեպքում հայտարարատուն պարտավոր է կատարել ոչ հավաստի տվյալների ճշգրտում և վճարել մաքսատուրքերը, հարկերը՝ ճշգրտված տվյալների հաշվառմամբ հաշվարկված չափով, ոչ ուշ, քան մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե հայտարարատուն ապրանքների բացնթողման ժամկետները չգերազանցող ժամկետում չի իրականացնում ոչ հավաստի տեղեկությունների ճշգրտում և չի վճարում մաքսատուրքերը, մաքսային մարմինը մերժում է ապրանքների բաց թողնումը:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք հոդվածներ 67 և 68)

Մաքսային մարմինն իրականացնում է մաքսային հայտարարագրի գրանցում կամ մերժում է դրա գրանցումը մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պահից առավելագույնը **2 (երկու) ժամվա** ընթացքում:



Հիմնավորում

Մաքսային մարմինը մերժում է ներկայացված հայտարարագրի գրանցումը Միության մաքսային օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Մաքսային հայտարարագրի գրանցման մերժումը գրավոր ձևակերպվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ **նշելով մերժման պատճառը:**

Մաքսային հայտարարագրի գրանցումը մերժելու դեպքում մաքսային հայտարարագիրը և ներկայացված փաստաթղթերը վերադարձվում են հայտարարատուին կամ մաքսային ներկայացուցչին:

Հայտարարագրի գրանցումից հետո ռիսկերի կառավարման համակարգի միջոցով իրականացվում է մաքսային հսկողության ուղու ընտրություն:

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք հոդված 190)

Փուլ IV Ապրանքների բաց թողնումը

Քայլ 9. Կազմակերպեք ապրանքի բաց թողնումը

Մաքսային ձևակերպումների համար նախատեսված ավտոմատացված համակարգչային ծրագրի միջոցով ապրանքների փաստաթղթային ստուգումը և զննումն իրականացնելու համար ընտրվում է մաքսային հսկողության իրականացման ընթացակարգերից որևէ մեկը՝

- ա) «Կանաչ ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **առանց փաստաթղթային ստուգման և զննման.**
- բ) «Դեղին ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **փաստաթղթային ստուգմամբ.**
- գ) «Կարմիր ուղի» ապրանքների և տրանսպորտային միջոցների բաց թողնում՝ **փաստաթղթային ստուգմամբ և զննմամբ:**

Ապրանքների ըստ ուղիների բաց թողնման և զննման մանրամասն նկարագրությունը հաստատված է՝ **ՀՀ կառավարության 24 մարտի 2001 թվականի N 236 որոշմամբ:**

Ապրանքների բաց թողնման գործընթացը պետք է մաքսային մարմնի կողմից ավարտվի ոչ ուշ, քան մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող **1 (մեկ) աշխատանքային** օրվա ընթացքում:



Ապրանքների բաց թողնման ժամկետները կարող են երկարաձգվել մաքսային հսկողության անցկացման կամ այդ գործընթացի ավարտման համար անհրաժեշտ ժամանակով՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրա պաշտոնակատարի գրավոր թույլտվությամբ, և երկարաձգված այդ ժամկետը չի կարող գերազանցել մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող **10 (տասը) աշխատանքային օրը:**

(Հիմք՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 196-րդ հոդված)



Հայտարարագրումն ավարտելուց հետո հայտարարատուն վերադառնում է մաքսային պահեստ՝ ապրանքի բաց թողնման նպատակով: Ապրանքների բաց թողնումը իրականացվում է զննումն ընտրողականությամբ իրականացնելու միջոցով՝ ելնելով վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված չափանիշներից:

Բողոքարկում. Մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից որոշումների ընդունման, գործողությունների և անգործության բողոքարկումն իրականացվում է Միության մաքսային օրենսդրության և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: